ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ՀՀ Ո-ՄԱԾՁԲ-ՍՏՈՒԳ/2020-ՃՈ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

<< 22 >> 04 2020թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ (ՀՎՀՀ 00219641) (այսուհետ՝Կատարող), ի դեմս ընկերության տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 28.02.2020թ-ին կնքված N ՀՀ Ո-ՄԱԾՁԲ-ՍՏՈՒԳ/2020-ՃՈ գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան կատարել փոփոխություններ ՀՀ Ո-ՄԱԾՁԲ-ՍՏՈՒԳ/2020-ՃՈ ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածում: Նշված փոփոխությունները ներկայացված են սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀոստիկանություն	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Նալբանդյան 130	Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4
ՀՀՖինանսներինախարարության Աշխատակազմիգործառնականվարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024321	Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 01840082	ՀՎՀՀ 00219641
Հեռ. 010 596021	Հեռ. 010 232600
Վ.Մովսիսյան	Ա.Բաբայան
/ՀՀոստիկանությանպետիտեղակալ/	/տնօրենի պաշտոնակատար/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«22» 04 2020թ. կնքված
N ՀՀ Ո-ՄԱԾՁԲ-ՍՏՈՒԳ/2020-ՃՈ ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71631110/1	Սարքերի ստուգման ծառայություններ (Ըստ հավելվածի)	դրամ	2 285 000	1	ք. Երևան Ծովակալ Իսակովի 9	Ծառայության մատուցումը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ՝ 21 օր հետո մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը:

Հավելված

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ոստիկանության Ճանապարհային

- «Բինար» արագաչափերի ստուգաչափման ծառայություն - 80 հատ,
- «Իսկրա-1» արագաչափերի ստուգաչափման ծառայություն - 31 հատ,
- «Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի» ստուգաչափման ծառայություն - 44 հատ,
- Լուսաթափանցիկության չափման միջոցների ստուգաչափման ծառայություն - 5 հատ:

Ստուգաչափումը պետք է կատարվի ՀՍՏ նորմերի, իրավական ակտերի պահանջների և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018 թվականի թիվ 133-Ն հրամանի համաձայն:

Արագաչափերի ստուգաչափումը պետք է կատարվի համաձայն <<ГДЯК 468162.007 МП>> Измерители скорости джижехия ТС радиолокационные <<Искра-1>>. Методика поверки>> մեթոդական ստուգաչափական ձեռնարկի:

<<Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի>> շահագործման համար պիտանելիությունը որոշելու նպատակով կատարվող աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝ անալիզատորի ցուցմունքների ճշգրտում, անհրաժեշտության դեպքում, անալիզատորի ցուցմունքի ստուգում, անալիզատորի ցուցմունքների կարգաբերումը, որը կարգավորվում են ըստ ԳՕՍՏ 8.838-2013-ի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀՖինանսներինախարարության
Աշխատակազմիգործառնականվարչություն
Հ/Հ 90001102432 1
ՀՎՀՀ 01840082
Հեռ. 010 596021

Վ. Մովսիսյան
/ՀՀոստիկանությանպետիտեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Հեռ. 010 232600

Ա.Բաբայան
/տնօրենի պաշտոնակատար/
(ստորագրություն)
Կ.Տ